ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը: Ժամանակակից կրթության համար կարևոր խնդիր է ձևավորել քննադատական մտածողություն զարգացնող կրթական համակարգ ու միջավայր:

Ուստի հարց է առաջանում, թե որքանով են ՀՀ կրթական համակարգի բարեփոխումների առջև դրված նպատակները նպաստում այս խնդիրների լուծմանը:

Հետևաբար, մեր նպատակն է հասկանալ, թե որքանով է ՀՀ կրթական համակարգը ձևավորում և զարգացնում քննադատական մտածողություն, սահմանել քննադատական մտածողության կարևորությունը հասարակության վերափոխման առումով,և վերջապես ներկայացնել առաջարկություններ, թե ինչպես կարելի է քննադատական մտածողությունը դարձնել մեր սովորողներին բնորոշ հմտություն:

Հայաստանի Հանրապետությունը, միանալով Բոլոնիայի գործընթացին, 2005թ.-ից ի վեր թևակոխեց բարձրագույն կրթություն բնագավառում բարեփոխումների իրականացման նոր փուլ: Բարձրագույն կրթության եվրոպական տարածքին ընդառաջ՝ Հայաստանում ներդրվեց երկաստիճան կրթական համակարգը, որակավորումների ազգային շրջանակը, կրեդիտային համակարգը և այլն: Այս առումով շատ կարևոր է նաև դպրոցական կրթության զարգացման միտումների համապատասխանեցումը վերոնշյալ գործընթացներին:

Մեր օրերում հաճախ է շեշտվում այն ընդհանուր մոտեցումը, որ կրթության նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ. այսօր կրթական համակարգն ունի առավել բարդ առաքելություն, այն է՝ ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն քննադատաբար մտածելու ինչպես ակադեմիական առարկաների, այնպես էլ իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ:

Քննադատական մտածողությանը նպաստող հմտությունների զարգացումը կարևորվում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդավարական արժեքների պահպանման տեսանկյունից: Նշենք նաև, որ այն

հասարակությունը, որն ունակ է մտածելու, խնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու, հանդիսանում է պետության զարգացման հիմնական շարժիչ ուժը և կոմպետենտ աշխատուժ է օրեցօր զարգացող աշխարհում:

Տարբեր հեղինակներ առաջ են քաշում քննադատական մտածողության տարբեր սահմանումներ: Ռոբերտ Յանգը (Robert Young) նշում է, որ քննադատական մտածողությունը ենթադրում է իմացական հմտությունների (cognitive skills) և ռազմավարությունների կիրառում, որը կմեծացնի ցանկալի արդյունքին հասնելու հավանականությունը: Ըստ նրա քննադատական մտածողությունը նպատակասլաց, պատճառաբանված, նպատակի իրագործմանն է: Յանգը նաև նշում է, խնդիրների լուծման, հիմնավորված ենթադրությունները կառուցման, հավանականությունների հաշվարկման ու որոշումների կայացման հիմքում պետք է ընկած լինի քննադատական մտածողությունը [5]: Ըստ նրա, այդպիսի մտածողություն ունեցող անհատները վերոնշյալ հմտություններն օգտագործում են գիտակցաբար, այսինք նախապես գնահատում են այն արդյունքի ազդեցությունը, որը ձեռք կբերվի մտածելու գործընթացի ավարտին:

Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է, որպես «ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել» [1]: Մեկ այլ

աշխատության մեջ Էննիսը նշում է, որ քննադատաբար մտածելու նպատակն գտնել ճշմարտությունը, կամ ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը [2]:

Կարելի է ասել, որ քննադատական մտածողությունն ունի երկու բաղկացուցիչ մաս. բաղկացուցիչներից մեկը ենթադրում է ինֆորմացիան և համոզմունքները գեներացնելու և վերամշակելու հմտությունների ամբողջություն, իսկ երկրորդը՝ այդ

հմտություններն օգտագործելու սովորույթն է, որի արդյունքում ձևավորվում է սեփական վարքագիծն ուղղորդելու հիմքը:

Նշենք, որ Բեննետ Մուրն իր աշխատություններից մեկում, ընդգծել է, որ քննադատական մտածողության առկայությունը կամ բացակայությունը կախված է մշակութային այն միջավայրից, որտեղ գտնվում է սովորողը [4]: Օրինակ, կան մշակույթներ, որտեղ ուսուցիչն ուղղորդում է սովորողին խոր գիտելիքների ձեռքբերման գործում և չի մղում նրան կիրառել այդ գիտելիքը, իսկ արևմտյան մշակույթն առավել հակված է քաջալերել ուսանողին առավելապես շատ

ժամանակ հատկացնել ինքնուրույն աշխատանքի իրականացմանը [3]:

Երբ ուսումնասիրում ենք քննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար գրականությում գոյություն ունեցող մոդելները, ակնհայտ է դառնում, որ բոլոր այդ մոդելները շատ կամ քիչ չափով հիմնվում են դեռևս 1956թ. ականավոր գիտնական Բենջամին Բլումի կողմից մշակված տաքսոնոմիայի վրա: Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական կամ, այսպես կոչված, իմացական խումբը բաղկացած է վեց մակարդակներից – գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, սինթեզ, և գնահատում:

Վերոնշյալ բոլոր վեց մակարդակներում էլ ուսանողներին անհրաժեշտ են համապատասխան հմտություններ, սակայն քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից պետք է առավելապես շեշտել վերլուծության, սինթեզի և գնահատման մակարդակները: Բլումի տասքոնոմիայի մակարդակները դասավորված են աճման կարգով, այսինքն նախորդ մակարդակը հաջորդի հիմքն է, սակայն քննադատական մտածողության համար անհրաժեշտ են այն հմտությունները, որոնք ձևավորվում են վերջին երեք մակարդակներում:

Մենք անց ենք կացրել հարցում Հայաստանի Հանրապետության Գորիս քաղաքի հիմնական դպրոցի սովորողների շրջանում: Հարցմանը մասնակցել են 98 աշակերտ: Նպատակ ենք ունեցել պարզելու սովորողների քննադատաբար մտածելու կարողությունը, քննադատական մտածողության հմտությունները, հակասությունները խաղաղ կարգավորելու հակվածությունը և քննադատական մտածողությունը բնութագրող հետևյալ անհատական հատկանիշները՝

Ճանաչողական կարողությունները

Հաղորդակցական հմտությունները

Համագործակցային, թիմային աշխատանքի որակները

Ստեղծագործական ունակությունները

Ինքնուրույն աշխատելու կարողությունները

Արժեքային համակարգը

Տեղեկատվություն փնտրելու, կիրառելու, տարածելու հմտությունները

Հակասությունները խաղաղ կարգավորելու հմտությունները

Դիագրամներում ներկայացված են սովորողների հարցման արդյունքները: Հարցերը նպատակ ունեն բացահայտելու սովորողների քննադատական մտածողության որակները:

1. Мы знаем, что Ани сидит рядом с Нареком.
Можем ли мы сказать, что Нарек тоже сидит рядом с Ани?(рис. 1***)***



Рис. 1 Результат вопроса 1

2. Мы знаем, что в корзине только гранаты и персики, но теперь персиков нет.Можем ли мы сказать, что в корзине лежит гранат? (рис. 2***)***



Рис. 2 Результат вопроса 2

3. Мы знаем, что все книги о мореплавании принадлежат Нареку. Мы также знаем, что все книги в зеленых обложках принадлежат Нареку.
Можем ли мы сказать, что хотя бы часть книг в зеленых обложках посвящена мореплаванию? (рис. 3***)***



Рис. 3 Результат вопроса 3

*4. Мы знаем, что все книги с желтыми обложками принадлежат Ани. Можем ли мы сказать, что все книги Ани в желтых обложках? (*рис. 4*)*



Рис. 4 Результат вопроса 4

*5. Укажите, чему из перечисленного Вы отдаете предпочтение в качестве основного источника получения знаний? (*рис. 5*)*



Рис. 5 Результат вопроса 5

*6. Исходя из вашего опыта обучения, укажите, как часто вы используете следующие источники. ?(*рис. 6*)*



Рис. 6 Вопрос

*7. Как вы решаете, какой источник лучше всего подходит для домашних заданий, практической работы, проектной работы и написания эссе? (*рис. 7*)*



Рис. 7 Результат вопроса 7

*8. Как, по вашему мнению, лучше всего подойти к решению проблемы, с которой вы столкнулись? (*рис. 8*)*



Рис. 8 Результат вопроса 8

*9. Вы когда-нибудь подвергали сомнению то, что написано в профессиональных книгах, статьях, веб-сайтах? (*рис. 9*)*

Рис. 9 Результат вопроса 9

10. Я буду считать переговоры успешными, если я выиграю, а мой оппонент проиграет. (рис. 10*)*



Рис. 10 Результат вопроса 10

11. Я буду считать переговоры успешными, если мы с оппонентом пойдем на небольшие уступки и выйдем из процесса в некоторой степени удовлетворенными. ?(рис. 11*)*



Рис. 11 Результат вопроса 11

Ընդհանրացնելով քննադատական մտածողության զարգացման միտումները, ընդունված սահմանումները, մեր կողմից կատարված հետազոտության արդյունքների վերլուծությունը, կարող ենք փաստել, որ

- Քննադատական մտածողությունն ինքնուրույն մտածողություն է: Երբ առաջադրանքներըն կառուցվում են քննադատական մտածողության հիման վրա, ապա սովորողի մոտ ձևավորվում է սեփական պատկերացումներ, գաղափարներ, ելնելով իր ուսումնառության հնարավորություններից: Արդյունքում նա ոչ միայն յուրացնում է ուսումնական նյութը, այլև զարգացնում է իր մտավոր հնարավորությունները: Այդ դեպքում նոր գիտելիքը գնահատվում է սովորողի կողմից և հիմք դառնում համոզմունքների ձևավորման համար: Ահա ինչու դասարանում անհրաժեշտ է ստեղծել ազատ, անկաշկանդ մթնոլորտ, որպեսզի սովորողները կարողանան մտածել և ինքնուրույն գտնել անգամ ամենաբարդ հարցերի լուծումները: Պետք չէ որ քննադատական մտածողությունը միշտ լինի ինքնատիպ: Ուսման ընթացքում սեփական կարող ենք ընդունել ուրիշների գաղափարներն ու համոզմունքները: Քննադատորեն մտածող մարդը առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում ուրիշի տեսակետը, քանի որ նրա մտածողության հիմքերը, ընթացքը, արդյունքները, վերահսկողությունը սուբյեկտիվ են: Ինքնուրույնությունը քննադատական մտածողության առաջին և հավանաբար, ամենակարևոր բնութագիրն է:
- Գիտելիքը ոչ թե քննադատական մտածողության արդյունքն է, այլ դրա խթանը կամ առաջին քայլը: Գիտելիքներն այն հիմքերն են, առանց որոնց մարդը չի կարող քննադատորել մտածել: Բարդ միտք ձևավորելու համար պետք է վերամշակել տեսությունների, փաստերի, գաղափարների, տվյալների ամբողջությունը: Քննադատական մտածողությունն օգնում է

աշակերտներին ընկալելու ամենաբարդ հասկացությունները և մտապահել բազում տարբեր տեղեկություններ:

- Քննադատական մտածողությունն սկսվում է հարցադրումներից և լուծվելիք հիմնախնդրի պարզաբանումից: Մարդն իր բնույթով հետաքրքրասեր է: Երբ մենք ինչ-որ նոր բան ենք տեսնում, ուզում ենք իմանալ ինչ է դա: Դասին նախապատրաստվելու համար մանկավարժը նախ պետք է որոշի ուսումնական խնդիրների ամբողջությունը: Երբ աշակերտները արդեն պատրաստ են դրանք ըմբռնելու, ուսուցիչը պարտավոր է օգնել, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն ձևակերպումներ կատարել: Ըստ հեղինակների, քննադատական մտածողության շնորհիվ ուսուցումը փաստերի և գիտելիքների պարզ մտապահումից և վերարտադրումից վերափոխվում է նպատակաուղղված, բովանդակալից գործունեության, որի ընթացքում աշակերտները կատարում են լուրջ մտավոր աշխատանք և հանգում կյանքի առաջադրած խնդիրների ճիշտ լուծմանը:
- Քննադատական մտածողությունը պարտադիր կերպով պետք է տանի դեպի համոզիչ փաստարկների ձևավորում: Քննադատաբար մտածող մարդը գտնում է խնդրի սեփական լուծումները և կարողանում դրանք հիմնավորել տրամաբանությամբ ու փաստարկներով: Եվ եզրահանգողը գիտակցում է, որ հնարավոր են նույն խնդրի այլ լուծումներ: Եթե կա այդպիսի իրավիճակ, նա պետք է կարողանա հիմնավորել և ապացուցել լուծման իր տարբերակի առավելությունները:
- Քննադատական մտածողությունն ունի նաև հասարակական ուղղվածություն: Քննադատական մտածողության արդյունքում ձևավորված յուրաքանչյուր միտք ստուգվում և ուղղվում է, երբ այն կիսվում է ուրիշների հետ: Վիճելիս, կարդալիս, քննարկելիս, ժխտելիս, հաստատելիս կամ կարծիքներ փոխանակելիս միաժամանակ ճնշում, հստակեցնում ենք սեփական դիրքորոշումը:Մանկավարժական գործընթացում քննադատական մտածողության զարգացման սկզբունքները կիրառելիս մեծ ուշադրություն է դարձվում մտքերի արդյունավետ փոխանակման կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Քննադատական մտածողության զարգացման սկզբունքների կիրառման համար հնարավոր կարողություններն ու հմտություններն են.
    1. կարողանալ ուշադիր լսել ուրիշներին,
    2. համբերություն, հանդուրժողականություն դրսևորել դիմացինի և նրա գաղափարների նկատմամբ,
    3. պատասխանատվություն կրել սեփական կարծիքի համար:
- Քննադատական մտածողությունն օգտագործվում է որոշումների կայացման, ձևավորման, գնահատման ու կանխորոշման, կարծիքների արտահայտման, տեսակետների մեկնաբանման ու արժևորման, քննարկումների՝երկխոսությունների ու վիճաբանությունների անցկացման ու կոնֆլիկտների լուծման ժամանակ: Քննադատական մտածողության բնորոշ գծերն են՝ հիմնավորվածությունը, խորհրդածականությունը, գնահատողականությունը և արդյունավետությունը: Քննադատական մտածողությունը սովորողների մոտ զարգացնում է խմբերում աշխատելու կարողություններ, տարբեր էթնիկ և սոցիալական ծագում ունեցող մարդկանց հարգելու կարողություններ, հավասար պայմաններում համագործակցելու, միևնույն ժամանակ ղեկավարելու, անձնական նախաձեռնություն ցուցաբերելու ունակություններ, միջառարկայական և ներառարկայական կապերի ձևավորման կարողություններ, գիտելիքն ստեղծագործաբար իմաստավորելու, ըստ նորության և կարևորության տեղեկատվությունը համակարգելու հմտություն:

Գրականություն

- Ennis, R. H. (1989). Critical Thinking and Subject Specificity: Clarification and Needed Research. Educational Researcher , 18 (3), 4-10.
- Ennis, R. H. (2008). Nationwide Testing of Critical Thinking for Higher Edication: Viligance Required. Teaching Philosophy , 31 (1), 1-26.60
- Gray, L. B. (2011). Gray, L., Bramhall, M., Garnett, K.Analysis of critical thinking skills across an international, cross-institutional student group. Internationalization of Pedagogy and Curriculum in Higher Education: Exploring New Frontiers. Coventry, England: The Higher Education Academy: Engineering Subject Centre.
- Moore, Z. B., Faltin, L., & Wright, M. (2010). Critical Thinking and International Postgraduate Students. Discourse , 3 (1), 63-94.
- Young, R. (1980). fostering Critical Thinking. In New Directions for Teaching and Learning (Vol. 3). San Francisco: Jossey-Bass.